«Հայ բուրժուազիան իմ աչքում դատապարտութեան արժանի տարր է նրա համար, որ նա իր ստոր ապազգային արարքները քողարկում է մտացածին պատճառաբանութիւններով վասն հայ վտանգաւոր սոցիալիստների և այլն: Սուտ է: Հայ Զիմզիմովի գրոշին ոչ մի վտանգ չի սպառնում Հայաստանում, որովհետև բոլոր հայերը մեծ ու փոքր Զիմզիմովներ են, սեփականութեան մոլի ֆանատիկոսներ: Եւ եթէ այնուամենայնիւ հայ Զիմզիմովը չի բարեհաճում թողնել Թիֆլիսն ու Բագուն և իր այդ տատանումը պատճառաբանում է սոցիալիզմի վտանգով — դրա մէջ պիտի տեսնել արբեցողի ծամածռութիւնները լիքը բաժակի առջև:

... Թող բուրժուազիան զայ և մասնակից դառնայ մեր պայքարին և ոչ թէ հեռից հեռու պահանջ առաջադրէ, թէ՝ մաքրեցէք ասպարէզը, որ ես բարեհաճեմ ինձ՝ հայութեանը հարգատ հռչակելու և ոտք կոխելու նրա երկիրը: Բուրժուազիայի ո՞ր առաւելութեան համար պիտի տեղի ունենայ այդ նահանջը...

Նորից ու նորից կրկնում ենք, որ Հայաստանը պատկանում է բոլոր նրանց, որոնք անկեղծօրէն ցանկանում են քրտնել նրա վրա և նպաստել նրա բարօրութեանը: Թէ որ տանջանաց կցորդ լիցիմք, ապա և փառաց հաղորդ լինելոց եմք — այսպէ՛ս պիտի նայի խնդրին հայ բուրժուազիան: Բայց ոչինչ չարած, պինդ փակած իր դրպանի բերանը՝ նա պատռում է իր կոկորդը լոկ փառքի և իշխանութեան համար: Այս վերաբերմունքի համար նոյնիսկ քարերը պիտի աղաղակեն, իսկ կենդանի մարդիկ՝ աւելի ևս»:*)

Ճիշտ էր ասում Դ. Անանունը. «Հայ Զիմզիմովի գրոշին ո՛չ մի վտանգ չէր սպառնում Հայաստանում»: Ընդհակառակը, իշխանութիւնը ամէն կերպ աջակցում էր, որ արտաքին նախաձեռնութիւնն ու դրամագլուխը մուտք գործեն Հայաստան, իբենց միջոցն ու կարողութիւնը նուիրեն երկրի վերաշինութեան գործին: Գուցէ, պահանջածից էլ աւելի փութկոտութեամբ ու լայնախոհութեամբ ընդառաջ էր գնում մասնաւոր դրամագլխի ամէն դիմումին կամ առաջարկութեան: Այս տեսակ լայնախոհ վերաբերումի և շարաշահութեան մէկ օրինակ կարելի է համարել այն բազմապիսի դիւրութիւնները և արտօնութիւնները, որ կառավարութիւնը տրամադրեց Մայիլեան եղբայրներին Հայաստանի զանազան մասերում արդիւնաբերական ձեռնարկներ սկսելու համար: Մայիլեանները ստացան մի շարք մենաշնորհներ — ելեկտրականացման, ապակու գործարանի — բայց և ո՛չ մէկ փորձ արին՝ որև է գործ կատարելու և իբենց անգործութիւնը դուրսը արդարացնում էին նրանով, որ, իբր թէ, «ընկերվարական» կառավարութիւնը արգելքներ է յարուցանում մասնաւոր դրամագլխի առջև:

1920թ. ամառը հայ և օտար դրամատէրերի կողմից եղան մի շարք տնտեսական առաջարկութիւններ, որոնց մի մասին ընթացք էլ տրուեց: Ցիշենք գլիցերական և շեղական մի քանի լուրջ ընկերութիւնների դիմումը Հայաստանում կաթնատնտեսական գաղութներ, երկրագործական մեքենաների պահեստներ և արհեստանոցներ հիմնելու մասին: Հայ և ճապոն դրամատէրերի մի խումբ իր ներկայացուցիչն էր ուղարկել Երևան՝ ելեկտրաերկաթուղագծի մենաշնորհ ստանալու համար. ենթադրւում էր շինել Երևան—Ելենովկա—Դիլիջան—Աղստաֆա և Ելենովկա—Նոր-Բայազէտ —

*) Դ. Անանուն, «Առանց Քինախնդրութեան», «Ցառաջ», 14 յուն. 1920թ.: